ԾԱՂԿԱԶԱՐԴԻ ՏՈՆԸ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ

Մարտի 16-ին Գուգարաց թեմի գործող բոլոր եկեղեցիներում նշվեց Ծաղկազարդի տոնը, որը նաև մանուկների օրհնության օրն է:

Ծաղկազարդի կիրակին Մեծ Պահքի վերջին կիրակին է, որ հիշատակությունն է Հիսուսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի: Բազմաթիվ մարդիկ Հիսուսին դիմավորում ու ողջունում են ձիթենու և արմավենու կանաչ ոստերով՝ բացականչելով. «Օվսա՛ննա Բարձրյանին, օրհնյա՛լ լինի Նա, որ գալիս է Տիրոջ անունով»: Արմավենու և ձիթենու ճյուղերով Տիրոջը Երուսաղեմի մոտ դիմավորելու հիշատակությունն է Ծաղկազարդի տոնին եկեղեցիներում ուռենու ճյուղեր օրհնելը և տուն տանելը:

Վանաձորի Առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Նարեկացի Մայր եկեղեցում, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի, առավոտյան մատուցվեց Սուրբ Պատարագ, որի ավարտին կատարվեց մանուկների մասնավոր օրհնություն:

Քրիստոսի մուտքը Երուսաղեմ խորհրդանշում է նաև Քրիստոսի Երկրորդ Գալուստը, որի համար և Ծաղկազարդի երեկոյան կատարվում է Դռնբացեքի արարողություն:

Ծաղկազարդի օրը առաջնորդանիստ Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցում նշանավորվեց նաև մեկ այլ իրադարձությամբ: Սեպուհ Սրբազանի մտահղացմամբ դեռևս անցյալ տարի եկեղեցին պատկերազարդվեց սրբերի հիշատակը հավերժացնող ու Հայ Եկեղեցու պատմությունը անմահացնող արվեստի հրաշալի գործերով: Պատկերազարդման աշխատանքները շարունակվեցին նաև այս տարի. Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու խաչքավոր, «Սեզամ-Գազ» ՍՊԸ տնօրեն Արմեն Մխոյանի բարերարությամբ Մայր եկեղեցու հարավային և հյուսիսային պատերը զարդարվեցին Սուրբ Ծննդյան, Մկրտության, Հարության և Ծաղկազարդի մեծադիր կտավներով: Սրբազան Հայրն իր օրհնությունը բաշխելով հավատացյալներին՝ կարևորեց Մեծ Պահքի շրջանում կատարած ամեն մի բարեգործություն՝ որպես ապաշխարության յուրօրինակ դրսևորում, և իր երախտիքի խոսքը ուղղեց բարերարին:

ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ